ԻՆՉՊԵ՞Ս ՃԱՆԱՉԵԼ ԱՍՏԾՈ ՁԱՅՆԸ

Լսո՞ւմ Ես Ինձ Հիմա

Մաս 4

«Կա ճանապարհ որ ուղիղ է մարդիս առաջին, բայց նրա վերջը մահվան ճանապարհներ են:» Առակաց 14:12

«Ամեն հոգու մի հավատաք. այլ փորձեցեք հոգիները թե արդեոք Աստվածանից են:» Ա Հովհաննես 4:1

«Եթե մեկը կամենում է նրա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար, թե արդեոք Աստվածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն եմ խոսում:» Հովհաննես 7:17

Տպավորությունները Ստուգելու 7 Միջոցները

1. Այն համապատասխա՞ն է Աստվածաշնչին

«Երկինքը և երկիրս կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնել:» Ղուկաս 21:33

«Ճշմարտախոս շրթունքը հավիտյան կմնա:» Առակաց 12:19

«Եթե մենք էլ, կամ երկնքիցը մի հրեշտակ ավետարանի ձեզ նրանից ուրիշ քան թե որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովված լինի:» Գաղատացիս 1:8

2. Այն դարձնո՞ւմ է ինձ ավելի նման Հիսուսին

«Ձեր ամեն մեկը թող այն մտածի, որ էլ Քրիստոս Հիսուսումն էր:» Փիլիպպեցիս 2:5

«Գերի ենք բռնում ամեն միտք Քրիստոսին հնազանդեցնելու համար:» Բ Կորնթացիս 10:5

«Եթե դառն նախանձ և հակառակություն ունեք...այս իմաստությունը վերևից իջած չէ. այլ դիվական: Բայց վերին իմաստությունը նախ և առաջ սուրբ է, և հետո խաղաղաբար, հեզ, հլու, ողորմությունով և բարի պտուղներով լիքը, անկողմնասեր, անկեղծ:» Հակոբոս 3:14-17

3. Իմ եկեղեցու ընտանիքը վավերացնո՞ւմ է այն

«Որ հիմա իշխանություններին և պետություններին երկնավորներումն եկեղեցու ձեռվը հայտնվի Աստծո բազմապատիկ իմաստությունը:» Եփեսացիս 3:10

«Արդարները կազատվեն գիտությունով:» Առակաց 11:9

«Խորհրդատուների շատությունովը փրկություն կլինի:» Առակաց 11:14բ

4. Այն համապատասխա՞ն է Աստծո կողմից ինձ տրված կերպարանքին

«Վասնզի նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար. որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ որ նրանցում վարվենք:» Եփեսացիս 2:10

«Զանազան պարգևներ ունենք այն շնորհի պես որ մեզ տրված է.» Հռովմայեցիս 12:6

5. Այն առընչություն ո՞ւնի իմ պարտականությունների հետ

«Հիսուսը նրան ասեց. Եթե ես կամենում եմ, որ դա կենա, մինչև ես գամ. քե՞զ ինչ. դու իմ ետևից եկ:» Հովհաննես 21:22

«Դու ո՞վ ես՝ որ ուրիշի ծառային դատում ես. իր Տիրոջ համար է կանգնում կամ ընկնում. բայց կկանգնի, որովհետև Աստված կարող է կանգնեցնել նրան:» Հռովմայեցիս 14:4

«Բայց դու ինչո՞ւ համար ես դատում քո եղբորը... որովհետև ամենս Քրիստոսի ատյանի առաջին պիտի կանգնենք.» Հռով 14:10,13

6. Այն հանդիմանո՞ւմ է, թե դատապարտո՞ւմ

Հանդիմանում(Աստծո կողմից)	Դատապարտություն(սատանայի կողմից)
Բացահայտում է ի՞նչն է սխալ	Հարձակում է քո արժանիքների վրա
«Այս կարիք ունի փոխվելու»	«Դու անարժան ես»

«Դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսումը լինողների համար.» Հռովմայեցիս 8:1

«Ես որոնց որ <u>սիրում</u> եմ հանդիմանում եմ, և <u>խրատում</u> եմ. ուրեմն ջանք արա և ապաշխարիր:» Հայտնություն 3:19

«(Սատանան)մեր եղբայրների չարախոսը.» Հայտնություն 12:10

7. Աստծո խաղաղությունը զգո՞ւմ եմ

«Աստված խռովության Աստված չէ, այլ խաղաղության:» Ա Կորնթացիս 14:33

«Ոչինչ հոգս մի անեք. այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով և գոհությունով՝ ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսումը:» Փիլիպպեցիս 4:6-7

«Լսիր իմաստունների խոսքերը, և սիրտդ տուր իմ գիտությանը:» Առակաց 22:17